

**Ամփոփ տեղեկատվություն Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի
գործունեության վերաբերյալ**

2015թ. փետրվար 19-ին ՀՀ կառավարության «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ ստեղծելու, խորհրդի կազմը, խորհրդի, փորձագիտական հանձնախմբի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կարգը հաստատելու մասին» N 165 – Ն որոշմամբ ստեղծվեց Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը:

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի առաջին նիստը տեղի է ունեցել 2015թ. հուլիս 28-ին: Նիստի ընթացքում քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագիրը: Քննարկվել են նաև մի շարք օրենքներում փոփոխություններ կատարելու առաջարկություններ, ինչպես նաև հավանության է արժանացել ՀՀ կառավարության և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը: Առաջին նիստի ընթացքում տրվել է թվով 10 հանձնարարական:

Խորհրդի երկրորդ նիստը տեղի է ունեցել 2015թ. դեկտեմբերի 28-ին: Այս նիստում խորհրդի անդամներին ներկայացվել է նախորդ նիստի ընթացքում տրված հանձնարարականների կատարողականը, ինչպես նաև քննարկվել են կրթության և գիտության, տարածքային կառավարման ոլորտներում կատարված հակակոռուպցիոն միջոցառումները, միջազգային կազմակերպությունների հետ հետագա համագործակցության անհրաժեշտությունը և այլ հարցեր, որի արդյունքում տրվել են համապատասխան հանձնարարականներ:

Անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի շրջանակում կրթության և տարածքային կառավարման ոլորտում 2015 թվականի ընթացքում իրականացված և 2015-2016 թթ. նախատեսված միջոցառումներին: Մասնավորապես, նիստի ընթացքում նշվել է, որ կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրման նպատակով «Բաց հասարակության հիմնադրամներ» հայաստանյան գրասենյակի հետ աշխատանքներ են իրականացվել 2014-2015 թվականներին իրականացրած «Կոռուպցիայի դեմ պայքարը և բարեվարքության արմատավորումը Հայաստանի կրթական ոլորտում» հետազոտության արդյունքների ուսումնասիրման, գնահատման և առաջիկա անելիքների ուղղությամբ:

Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչը խորհրդին զեկուցել է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության բարձրացման և բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացման ուղղությամբ իրականացված մի շարք միջոցառումների, այդ թվում էլ էլեկտրոնային ժողովրդավարության (e-democracy) գործիքների կիրառման վերաբերյալ: Մասնավորապես, նշվել է, որ քաղաքացիների շրջանում իրականացվել են SMS հարցումներ՝ համայնքային խնդիրների առաջնահերթության առավել հստակ պատկեր ունենալու նպատակով, ինչպես նաև ընթանում են աշխատանքներ 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային կայքերի ստեղծման, թարմացման, համայնքային իշխանության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերի հրապարակման, ավագանու նիստերի, հանրային քննարկումների և լսումների վերաբերյալ ծանուցման և ավագանու նիստերի առցանց հեռարձակման ուղղությամբ:

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի երկրորդ նիստի ընթացքում տրվել են 7 հանձնարարականներ, որոնք վերաբերում են ԱՄՆ ՄՁԳ-ի և այլ հասարակական և

միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը շարունակելուն, այս ոլորտում ՀՀ միջազգային պարտավորությունների կատարմանը, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների վերջնական տարբերակները ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելուն, ինչպես նաև վարչարարության հետագա պարզեցմանը:

Հանձնարարականները կատարման ընթացքում են, որոնց կատարման ընթացքի մոնիթորինգ է իրականացնում ՀՀ կառավարության աշխատակազմի Հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժինը:

Ընթացիկ հանձնարարականների կատարողականը կներկայացվի Խորհրդի հաջորդ հերթական նիստի ընթացքում, որը տեղի կունենա 2016թ-ի երկրորդ եռամսյակում՝ համաձայն ՀՀ կառավարության 19.02.2015թ. N 165-Ն որոշման:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժին**